

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅՈՑ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԷՆ

(Շարունակութիւն, տես Բազմավէպ 1927, էջ 353)

10. Երբ Անանիա մոկացին աթոռ ելաւ (943-968), գտաւ «Աղուանից մետրապօլիտն որոշեալ ի միաբանութենէ սրբոյն Գրիգորէ ամօք իբրեւ հարիւր», կը գրէ ինքն իսկ 958ին, «Յաղագս տպրս տամբուրեան տունն Աղուանից» յիշատակարանին մէջ: Այս հաշուով՝ զրացի եկեղեցւոյդ այս երկրորդ բաժանումը կը լինի իբր 843ին, Յովհ. Ովայցի կաթողիկոսին ժամանակ, ուր Օրբելեան 69 տարի միայն կու տայ՝ Հիւսիսային Հայաստանի քաղկեդոնական եպիսկոպոսաց համար դասանական նեցուկ մ'էր եղած Աղուանից աթոռը: «Այլ և ոմանք յեպիսկոպոսաց (Հայոց), կը յարէ Մոկացին, համաձայնը նմին եղեալք»: Եւ Սիւնեաց զօրաւոր առաջնորդը Յակոբ, զոր տեսանք կանխաւ, «նա բնաւ իսկ մոռացեալ էր զաւանդ աստուածատուր ձեռնադրութեանն և ընկրկեալ ի զրկաց հայրենատուր շնորհէն», այսինքն գատուած հայրապետէն և «մտեալ ընդ լծով ծառայութեան իւրոյ ծառայակցին», որ էր Աղուանից կաթողիկոսը Սահակ: «Այլ և զազօրմս ի սորոք եպիսկոպոսաց (Հայոց) չարասաղիր նամակը զըրդեայ (Յակոբ) ի սուրբ Լուսաւորչի աթոռոյս... և ծաղածական բանս հայհոյութեան տալը վիճել քաղկեդոնականացն զմերոց աթոռակալացն»: Ուրեմն այս բաժանման հիմն ու պատճառ քաղկեդոնականութիւնն էր, զոր Անանիա այդքան ընդարձակուած գտաւ Հայոց և Աղուանից մէջ:

Բայց ինք, որ իշխանութեան հետ Եզիա արճիշեցւոյն շղերն ալ ժառանգած

էր, չհանգուրծեց, Եւ իրեն նեցուկ առած առաւելապէս Կարուց թագաւորն Արաս, նախ հրաւիրեց Աղուանից կաթողիկոսն ի միաբանութիւն: Իսկ նա «ըստ սաղբելոյն Յակովբայ և ըստ շաղեալ աղանդոյ քաղկեդոնականաց՝ որ էր տիրեալ աշխարհին» Հայոց ու զրացեաց, և յեցած բարեկամութեան իրենց իշխանակ թագաւորին՝ «գարձելոյ յաղանդն փաղկեղունի, ոչ հաւանէին զալ ի միութիւն ժողովոյն»: Այլ միայն Սահակ ու Յակոբ իրենց ձեռնադրով պատասխանեցին՝ թէ արքայից ու եպիսկոպոսաց ձեռնադրելի կաթողիկոսը պիտի ընդունէին ու ծառայէին անոր: Յաջորդ տարին Անանիա եպիսկոպոսներով ու զլիւսաւոր վանականներով Սիւնիք գնաց, ուր Յակոբ ստիպուեցաւ հնազանդութիւն խոստանալ իրեն. և երբ դարձաւ, Սիւնեաց առաջնորդը վերստին իւր նախկին դիրքը բռնեց, Այն ժամանակ, կ'ըսէ Անանիա, «նախ կամեցար մարքել զընձիւ զեալ աղանդ փաղկեղունի, որ յաշխարհս Հայոց իբր քաղցկեղ ձարակեր, և զորոք աշխարս էր կայեալ, որպէս վերագոյնն ասացաք»: Արասայ հրաման հանել տուաւ՝ «զի մի՛ ոք իշխեսցէ ամուսնանալ ընդ երկարեակսն», որոյ անաստուղը պիտի զխատուէր՝ և «առժամայն, կ'ըսէ, բարձան ամենայն անառակ կարգադրութիւնքն՝ որ էին յաշխարհին երանելոյ թագաւորին Արասայ»: մինչ անոր անձուկ սահմաններէն դուրս կը շարունակէր փալ քաղկեդոնական դասանութիւնը:

Երբ Աղուանից կաթողիկոսը մեռաւ,

1. Օրբել. 206. — 2. Բզմ. 1927, 198. — 3. Արթ.

1897, 130. — 4. Անդ. 131. — 5. Անդ. 132.

Անանիա իրեն հանելի Դաւիթը ձեռնադրեց ու զրկեց հոն, որոյ ղէմ հանեց Յակոբ Աղուանից շատերը: Հոս կ'որդայ կաթողիկոսը, տեսնելով «զոսկիտս լցեալ երախայ մեռելօր» քաղկեդոնիկ քաղմութեան, զորս քահանայք կը զգուշանային մկրտել. «զուգաւորութիւնք ի պոռնկութիւնք համարեալ էր», և «վերստին ծընունդն (մկրտութիւն) ի մեռելութիւն յաւիտեանից». այսինքն երկու խորհուրդներն ալ անվաւեր նկատուած էին: Ասողիկ ալ կը պատմէ՝ թէ Անանիա իւր ժամանակից վարդապետաց հետ խորհրդակցելով, «զքաղկեդոնական մկրտեալսն կըրկին անգամ հրամայեցին մկրտել», կըրկեցելով վերթանէս քերթողի յանդգնութիւնը: Իւր խորհրդականներէն էր Սամուէլ կաթողիկոսը, որ կը զրէժայայտէ. «Յիւրախ և կարի դաջ զընզգմեալսն յազգաց և զզոդացեալսն յաղանդոյն Նեստորի և Քաղկեդոնի ժողովոյն առեալ մկրտեմք որպէս զանկնիք»: Երբեք թէ Ալեքս Ա կայսեր օրով ալ (1081-1118) զիս Հայքէն ոմանք կը շարունակէին նոյն անկարգութիւնը, որով նա ևս փոխարէն հըրամայեց երկրորդ մկրտութիւն ստեղծել և անամաչ զամենայն ազգն Հայոց մկրտէր և ոչ զարհուրէր ի Հոգւոյն սրբոյ», որոյ առաջին օրինակը սակայն մեք էինք տուած: Ալեքսի գործին կ'ականարկէր անշուշտ Պօղոս տարօնացին ալ, երբ 1101ին կը զրէր իւր յոյն հակառակորդին թէ՛ փոխտէի՝ թէ «Դուք արհամարհէք զհրամանս սրբոց առաքելոցն, և զմկրտեալսն մեր զարծեալ մկրտէք»: Մարտիային է՝ ուրիշի սխալն աւելի շուտ ու մեծ տեսնել քան իրենը: «Եւ յայսմ նեղութեան եկելոյ հասելոյ ի վերայ Աղուանից և տանն Սիսականի՝ խոռվեցաք պղտորեցաք», կը շարունակէ Անանիա՝ որ կ'ելնէ դարձեալ կ'երթայ Աղուանից երկիրը 949ին, ժողով կ'ընէ ու կը հաշտուի անոնց հետ:

Անկից կ'անցնի Սիւնեաց աշխարհը, կը նզովէ անոնց աննուաճ առաջնորդը և ի Շիրակ կը տանի<sup>9</sup>, ուր և կը վախճանի: Եւ յաջորդը վահան հպատակութեան գիր կու տայ կաթողիկոսին<sup>10</sup>, որով Սիւնիք առ երեսս կը հրաժարին քաղկեդոնականութենէ:

Մոկացւոյն գրութեան անծանօթ մնաց Օրմանեան, և նոյն հայրապետի յիշեալ գործոց տեղեկութիւնն Օրբելեանէն առաւ<sup>11</sup>, աղբիւրին պէս շատ անկատար ձեռով մը, յորում աներեւոյթ կը մնայ քաղկեդոնեան մեծ ու զլխաւոր դերն այդ խընդրոց մէջ: Եւ իւր աղբիւրին հետ կը ներկայացնէ վէճը հասարակ ապստամբութեան մը ձևին տակ. թէպէտ Սիւնեաց պատմիչը կարգացած էր ու կը յիշէ Անանիայի այդ հաւատոյ նամակը<sup>12</sup>, որով իւր լոսկիւթիւնը քաղկեդոնեան հարցի մասին՝ զիտումնաւոր էր:

11. Առ երեսս էր՝ ըսի՝ Սիւնեաց նոր առաջնորդին հրաժարումը երկարուն դաւանութենէն, եւ յիւրախ Ջուանշիր իշխանի այդ որդին անած նոյն վարդապետութեամբ, հազիւ Մոկացւոյն աթոռն ելաւ (968-972), «ընդ քաղկեդոնական» սիրելութիւն և հանութիւն կամեցաւ առնել թղթով», կը զրէ Ասողիկ: Մեծապէս վերգովեցաւ հայ կղերին մէկ մասը, խաչիկ Արշարունեաց և ուրիշ եպիսկոպոսներ ու վանահայրեր, և ժողով իւրեքին Անույ մէջ: Վահան զգաց՝ որ մեծ փոթորիկ պիտի պայթէր, և փախուստ տուաւ վասպուրականի Ապուսահէլ թագաւորին քով՝ որ իրեն զաղափարակից մ'էր: Անույ ժողովն Աշոտ արքայի կամակցութեամբ նոր կաթողիկոս ընտրեց Սևանայ վանանքը Ստեփանոս: Բայց միւսը չհրաժարեցաւ աթոռէն, «և յերկոցունց կողմանց նզովիւր լին զաշխարհս Հայոց», կ'ըսէ պատմիչը: Հոն «Ստեփանոս վարդապետն մեծ», — զոր Չամչեան և Օրմանեան շը-

1. Աբր. 1897, 133. — 2. Ասող. 178. — 3. Բզմվ. 1927, 291. — 4. Տեպուհ. Բ Ս. Ղըր. — 5. Ուռ. 845. — 6. Տարս. 239. — 7. Աբր. 133. — 8. Ասող.

134-135. — 9. Անդ. 189. — 10. Բզմվ. 1927, 138. — 11. Ապու. 1087-94. Օրբել. 200-203, 206-208. — 12. Օրբել. 208. — 13. Անեցի. 100 «ընդ վերս».

փոթեցան կաթողիկոսին հետ, մինչ պատմիչը գատ գատ կը յիշէ անոնց մահերն ալ, — կրօնաւորաց բազմութիւն մը հաւաքելով իւր շուրջ, կլաւ գնաց Վասպուրական՝ «ի յանդիմանութիւն վահանայ և Ապուսահչի»։ Անոնք առանց երեսելու ինքնակոչ յանդիմանչաց հետ, իմացուցին՝ թէ այդ պաշտօնով ու պատրաստութեամբ իրենց վրայ եկող հիւրը ընդունելութեան վայրը՝ Աղթամար կղզին էր, ուր տարուեցան փակուեցան իրենց գլխաւորները։ Չորս տարի վերջ (971) վախճանեցան երկու կաթողիկոսներն ալ, «և բարձախառութիւնն յաշխարհէս Հայոց»։

Արժուանեաց քաղկեդոնիկ դրօշին ներքեկը գտնուեց Սորունիք, ուր էր Նարեկայ վանքը, ի որում այդ ջրվանին կը գեղգեղէր Հայոց հոգեւոր սոխակը Գրիգոր։ Իւր հայրը՝ Խոսրով եպս. Անձեացեաց ու ծանօթ քաջ մեկնիչը, ինդիրներ ունեցաւ տաքարին Անանիա մոկացւոյն հետ, որոյ ձեռքէն ստացած էր իւր արժուր, կաթողիկոսը գինձ կ'անուանէ «այր համեստ և գիտնաւոր, և ալեօք ծերութեամբ զարգացեալ»։ Բայց չէր հանդուրժեր անոր ինչ ինչ յոճական և ազատ զաղափարաց, որոցմէ չհրաժարելուն համար՝ բանադրեց զայն, և աղոր պատմութիւնը թողուց՝ «Պատձառ յարգս զԽոսրով եպս վելոյն» վերնագրով, նոյնպէս լոյս տեսած՝ Խոսրովու վերագրուած համոզումներն անոր մէջ կը մատնեն ծածուկ քաղկեդոնիկը, ինչպէս Սիւնեաց պատմիչն ալ կը գրէ՝ թէ «հերձուածս ևս յօշէին՝ եթէ քօղաբորբեալ ունի գրաղկեդոնին», թէպէտ Մովսիսին գայդ չէ յիշեր։

Իւր հօրը կրօնական գաղափարներով սնած ու դաստիարակուած կը ճանաչէին մեր նախնիք նաև անոր բանաստեղծ որդին, ինչպէս կը յայտարարէր Լամբրոնացին Հոռովկայի ժողովին առջև. «Ո՛րդդիցու... զՎահանայ հայրապետին զհա-

մաձայնութիւնն առ մեծ եկեղեցին Հոռոմոց, և զնորին հետեւողաց թագաւորացն և վարդապետաց, յորոց մի էր և իմն աստուածաշնորհ և յոգունց գերազանց հրեշտակն ի մարմնի Գրիգոր նարեկացի»։ Ինքն իսկ ընթերցս մեծ գովեստով կը փառաբանէ Յունաց կայսերութիւնը, պատմութիւնն ընելով Ապարանից խաչին, զոր նոյն (Մովսիս) զաւանդ Ստեփանոս եպիսկոպոսի բեռնոյն խնդրանք՝ վասիլ ու կոստանդին զահակից կայսերը շնորհեցին, և «հրախալնոցս արեւելականաց տանս Թորգոմայ աղբիւրս կենաց անձրեաց ի գթութեանց իւրեանց ցօղեցին»։ Այս լեզուն՝ քաղկեդոնիկ Յունաց հակառակորդի մը բարբարոս չէ քնակաւապէս։

12. Վահանայ դէմ մարտնչողաց զըլխաւորը՝ Խաչիկ Արշարունեաց՝ նստաւ անոր արժող (972-992)։ Իւր հակաքաղկեդոնութիւնը յայտնի է նախկին և հետեւող ընթացքէն, և առ Սեբաստիոյ և Մելիտոնի մտորապոլիտանիք գրած՝ թղթերէն։ Ասոր յաղորդին Սարգսի (992-1019) դաւանութեան մասին կը լռէ Աստղիկ, որ անոր հրամանաւ գրեց իւր պատմութիւնը։ Գիտենք՝ որ հաւածեց թռնդրակեցի աղանդաւորները՝ Բայց իւր աղեղը չլարեց բնաւ քաղկեդոնեանց դէմ, ինչ որ նոյնպէս պատմչին ուշադրութիւնը պիտի գրաւէր։

Պետրոս Գեոտաղարծի (1019-1054) յունասիրութիւնը ծանօթ է։ Պոնտոսի մէջ վասիլ կայսեր փափաքով ու ներկայութեամբ ջրօրհնեաց հանդէսը կատարեց, և մասնակցեցաւ մեր իշխանաց՝ գրագրիկ թագաւոր կայսեր մատնելու և զԱնի Յունաց յանձնելու տխուր գործին մէջ։ Ըսկ իրեն վերագրուած արձաթսիրութիւնն<sup>10</sup> էր պատճառ իւր այդ մերձաւորութեան, թէ կրօնապէս ալ համոզակից էր Յունաց, պատմիչները չեն ճշգրէր։ Այս յայտնի է՝ որ մեր ստուգիւ հակաքաղկեդոն հայրա-

1. Չաճ. Բ. 841. Աղբ. 1120. — 2. Աստ. 181-82. — 3. Արտ. 1897. 276. — 4. Օրբւլ. 202. — 5. Լ.ժ. Թղ. 158. — 6. Նարեկ. 372-75. — 7. Աստ.

202. Գր. Բորոց, 302. — 8. Լաս. ԻԲ. — 9. Նոյն. 12, 41, 42. — 10. Նոյն. 42, 60.

պետները հեռի ապրեցան միշտ անոցմէ, և Յովհաննէս պատմիչ մերժեց կայսեր հրաւերը, ինչպէս տեսանք՝. մինչ Պետրոս զիջաւ հրաւիրին, գնաց Կոստանդնուպոլիս, և կայսերէն ու պատրիարքէն ընդունուեցաւ Ս. Սոփիայի մէջ՝, որ կրօնական հաղորդակցութեան ձև մ'էր ըստ ինքեան:

13. Իւր քեռորդին ու յաջորդը թաչիկ Բ (1054-1060) ընտրուեցաւ Սերաստիոյ մէջ, Կայսրը զինք ի Կոստանդնուպոլիս տարաւ ու հոն պահեց երեք տարի, ստիպելով որ յանձն առնու իրեն հարկատու լինել. «ընդ հարկիւ կամէին արկանել զնա», կ'ըսէ ականատես պատմիչը՝, մինչ հետագայը «վասն հաւատոյ» կը կարծեն: Սակայն ինք հակաքաղկեդոն էր համոզմամբ, որով Սինանիա սանահնեցին իւր հակաճատութիւնն «Ընդդէմ երկանակաց» գրեր է ասոր հրամանաւ, ինչպէս կ'իմացնէ սկիզբն առանց անուան, և վերջը յայտնապէս՝ թէ «տէր թաչիկ վերադիտող Հայոց մեծաց» էր այն. որով վերնագրին բացատրութիւնը՝ «հրամանաւ տեսնու Պետրոսի Հայոց վերադիտողի» սխալ և յետամուտ է:

1065 թուին Կոստանդին Տուկիծ (Գուկաս) կայսրը Սերաստիայէն ի Կոստանդնուպոլիս կը հրաւիրէ Արծրունի Ատոմ և

Արուսաշ արքայորդիքը, որոց կ'ընկերէ՝ զիտութեամբ երևելին Յակոբ քարափնեցի: Հոն կրօնական խնդիր կը յարուցուի, կը վիճեն ընդ երկար, համաձայնութեան մը կու գան զլիաւոր հարցին շուրջ, և վարդապետը «սակաւ մի վասն երկրնութեանն փրկատուսի ի կողմն Հոռոմոց դարձաւ և ... զրեաց գիր միաբանութեան Հայոց և Հոռոմոց»: Ուռայեցին թատերական տեսարան մը կը բանայ հոս, յանկարծակի մէջտեղ բերելով Բագրատունի գահընկէց ու զիտական արքայն Գագիկ, որ պոռտաբանելով կը պատռէ կայսեր առջև Յակոբայ շարադրածը, և ինք նոր կը գրէ Հայոց դաւանութիւնը՝, զոր պատմիչը յառաջ կը բերէ: Հոն Գագիկ կը նզովէ բոլոր հերետիկոսները. որոց մէջ և զՊետրոս թափիչ ու Դիոսկորոսը՝, բայց զՔաղկեդոն ոչ. այլ մանաւանդ կ'ընդունին յայտնապէս անոր սահմանը, բառացի կրկնելով Աստուածաբանին խօսքը՝. «քնոքիւնք երկուք, քանգի Աստուած և մարդ զի հոգի և մարմին. բայց որդիք ոչ երկուք և Աստուած ոչ երկուք, այլ մի»։ Հետեւաբար անիմաստ էր հակաքաղկեդոն պատմիչին անոր տուած դերը, մինչ նա իւր հարազատ գրութեան մէջ կ'ընդունին երկու բնութիւնները:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԵԻԵԼԲՈՒՍ

Գ. ԴԱՐՈՒ ՄԷՋ

Ա. — Մեր առաջին յօդուածով՝ ջանացինք ուրուագծել քրիստոնէից ժողովարաններու ծագումն Առաքելոց իսկ ժամանակէն, առանց մի որոշ ձև նշանակելու այն շինութեանց մինչև երկրորդ դարը, յորմէ յետոյ քրիստոնէական եկեղեցին կամաց կամաց քաղաքականապէս ևս կը սկսի կազմակերպուիլ, որոշ իրաւունքներ

և ազատութիւններ ձեռք բերելով հետագայ կայսրներէն: Այլ տակաւին մինչև Գ. դարու վերջին քառորդին, իրեն շինութիւն՝ իշկեղեցի անուան արժանաւոր, նշմար թողած չէ պատմութիւնն, բացի Տիւրոսի յաղկիկալ Եկեղեցիէն, որի ստորագրութիւնն իւր տեղին պիտի տանք: Հիմնուելով այդ միակ օրինակին վերայ,

1. Բզմ. 1927, 364. — 2. Ուռ. 105. — 3. Լաս. 60. — 4. Ուռ. 153. Անեց. 212. — 5. Ուռ. 160-62.

— 6. Նոյն՝ 165-66. — 7. Բզմ. 1927, 327. — 8. Ուռ. 170. — 9. Բզմ. 1927 թ. 9-10.